ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«11» նոյեմբերի 2026 թվականի N: 491 -Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի N: 259-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման» կարգի 13-րդ և 14-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N:1550-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կանոնադրության» 20-րդ կետի դրույթներով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի 2026 թվականի նոյեմբերի 3-ի N: 02/09.2/41703-2026 գրությունը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների վարչատնտեսական մասի համակարգողի թափուր տեղը զբաղեցնելու համար հավակնորդների հետ հարցազրույցներ անցկացնելու նպատակով ձևավորել հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Արտուշ Հովհաննիսյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ, նախագահ,

2) Արմեն Մարտիրոսյան -Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացուցիչ,

3) Վանիկ Մարտիրոսյան -Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական,

4) Նարինե Մինասյան -Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ,

5) Գևորգ Ղումաշյան -Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պարտականությունները կատարող:

Դ.ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է